ՀՏԴ 94(479.25) Հայոց պատմություն

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ (1988-1990) ՑՈՒՑԱՊԱՍՏԱՌՆԵՐՈՒՄ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հարություն ՄԱՐՈՒԹՅԱՆ

Բանալի բառեր՝ *Պաստառներ, ղարաբաղյան շարժում, հայ ժողովուրդ, Ղարաբաղ, Արցախ, Հայաստան, ցեղասպանություն, անկախություն, հիշողություն, հայ*

Ключевые слова*: плакаты, карабахское движение, армянский народ, Карабах, Арцах, Армения, геноцид, самостоятельность, память, армянский*

Keywords*: rally posters, Karabakh movement, Armenian people, Karabakh, Artsakh, Armenia, genocide, independence, memory, Armenian*

NAGORNO-KARABAKH MOVEMENT (1988-1990) IN POSTERS: GENERAL CHARACTERISTICS

H.MARUTYAN

Numerous and multi-topic rally posters designed during Karabakh Movement in the period from February 1988 to August 1990 are distinguished into 20 thematic groups, which reflect national mentality and thus present volumnous and abundant material for study. The discourse on the posters point to the fundamental change in the identity of Soviet Armenian citizens during the Karabakh movement that was conductive to the conception of the necessity of building independence and the declaration of the Armenian Republic in 1991:

КАРАБАХСКОЕ ДВИЖЕНИЕ (1988-1990) В ПЛАКАТАХ: ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА

А. МАРУТЯН

Многочисленные плакаты широкой тематики созданные во время карабахского движения в период с февраля 1988г. по август 1990 можно разбить на 20 тематических групп, отображающих народную ментальность и тем самым представляющих обьемный материал для исследования. В текстах на плакатах отображена глубокая перемена в идентичности граждан Армянской ССР во время карабахского движения, что привело к осознанию необходимости создания независимости и превозглашения Республики Армении в 1991г.

Ցուցապաստառները՝ պատկերների ու գրավոր բանաձևերի համակցումը, ազգային ինքնության խոսուն դրսևորումներից մեկն են, որոնք, իբրև կանոն, մեծ թվով ի հայտ են գալիս հասարակության համար ճգնաժամային պահերին, այն է՝ ուղեկցում են հեղափոխություններին, ժողովրդական զանգվածային ելույթներին, երկրի կյանքում տեղ գտած արմատական փոփոխությունների՝ երբեմն տարիներ տևող գործընթացներին և այլն: Հաճախ լինելով ժողովրդական տրամադրությունների չմիջնորդավորված ցուցիչներ, իսկ որոշ դեպքերում էլ ստեղծվելով քաղաքական ուժերի կողմից՝ ցուցապաստառները հսկայական տեղեկատվություն են պարունակում իրենց ժամանակաշրջանի մասին, օգնում այն ավելի լավ հասկանալուն: Դրանք ինքնության յուրահատուկ հանգույցներ են, դեպի ուր ձգվում են և որտեղ կենտրոնացած են բազմաթիվ և տարբեր թելեր: Այդ հանգույցների՝ յուրահատուկ միկրոկոսմոսների բացումը թույլ է տալիս դիտարկել մակրոկոսմիկ բնույթի երևույթներ: Ցուցապաստառները՝ հասարակական գործընթացների պատկերազիր «վկաները», սովորաբար անմիջապես արձագանքում են իրադրության փոփոխություններին, ուստի և դրանցով շատ հարմար է լինում հետևել հասարակական զարգացումների փուլերին, իսկ դրանց բովանդակային փոփոխությունների վերլուծության միջոցով՝ քաղաքական կողմնորոշումների և ինքնության ձևափոխմանը: Ցուցապաստառներն ունեն ևս մի եզակի հատկություն. նրանց միջոցով, չդիմելով բնույթով աշխատատար սոցիոլոգիական հետազոտությունների,

սկզբունքորեն, բավարար վստահությամբ, կարելի է դատել բազմահազարանոց միտինգների սոցիալական կազմի մասին:[1]

Ղարաբաղյան շարժման տարիներին (1988 փետրվար – 1990 օգոստոս) ստեղծված ցուցապաստառները բազմաքանակությամբ (մեզ հաջողվել է արձանագրել, բանավոր և գրավոր աղբյուրներից հավաքել շուրջ 1000 միավոր), բովանդակային բազմազանությամբ (առանձնացվում է շուրջ 20 թեմատիկ խումբ), դրանցում արտահայտված ժողովրդական մտածողության հարստությամբ ուսումնասիրության առատ և ծավալուն նյութ են պարունակում: Պետք է նշել, որ տարբեր թեմատիկ խմբերը երբեմն «իրար ծածկում են», ինչը զարմանալի չէ, քանի որ ցուցապաստառները հաճախ բազմաշերտ են և հավասար հաջողությամբ կարող են վերաբերել ինչպես մեկ, այնպես էլ մյուս խմբին: Այնուամենայնիվ, ամբողջությամբ վերցրած, այդ խմբերը հստակորեն տարբերակվում են:

Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների մեջ առանձնանում են հետևյալ թեմատիկ խմբերը, որ ստորև ներկայացվում են ըստ միավոր-ցուցապաստառների մոտավոր քանակության. ա) հայերի ցեղասպանությունը, սումգայիթյան ոճրագործությունը և դրանց հետ կապված զարգացումները (370), բ) հայ ժողովուրդ (այդ թվում՝ հայոց լեզու, հայկական դպրոցներ) (86), գ) վերաբերմունքը Կենտրոնի՝ ԽՍՀՄ ղեկավարության (այդ թվում Ռուսաստանի և ռուսների) և խորհրդային կարգերի նկատմամբ (72), դ) վերաբերմունքը վերակառուցման, հրապարակայնության ու դեմոկրատացման քաղաքականության նկատմամբ, բյուրոկրատիայի քննադատություն (66), ե) Ղարաբաղը՝ Հայաստանի մաս (63), զ) վերաբերմունքը ԽՄԿԿ-ի ու նրա քաղաքականության նկատմամբ (55), է) վերաբերմունքը խորհրդային զորամիավորումների՝ տարածաշրջանում խաղացած դերի նկատմամբ (52), ը) «Ղարաբաղ» կոմիտե, «Կռունկ», Պ. Հայրիկյան (41), թ) ազգերի ինքնորոշման իրավունքը և ԽՍՀՄ սահմանադրությունը (37), ժ) Ղարաբաղի խնդիրը վերակառուցման, հրապարակայնության, դեմոկրատացման քաղաքականության և արդարության լույսի ներքո (36), ժա) Հայաստանի անկախությունը (30), ժբ) պանիսլամիզմ և պանթուրքիզմ (22), ժգ) Ադրբեջան և ադրբեջանցիներ (17), ժդ) բնապահպանական խնդիրներ (15), ժե) վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի ղեկավարության նկատմամբ (15), ժզ) վերաբերմունքը Գերագույն խորհրդի նստաշրջանների և պատգամավորների նկատմամբ (13) և այլն:[2]

Առաջին թեման ընդգրկում է ցուցապաստառների ամենամեծ քանակությունը: Դա պայմանավորված է, առաջին հերթին, այն հանգամանքով, որ 1988 թ. փետրվարի 27-29-ի սումգայիթյան ոճրագործությունը ժողովրդի կողմից ընկալվեց, գնահատվեց որպես ցեղասպանության դրսևորում և, այդ կերպ, առաջին պլան մղեց 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության հիշողությունը: Դա դրսևորվում էր մի շարք ձևերով: Մեծ քանակություն էին կազմում ծաղկեպսակները, որոնք իրենց վրայի սգո ժապավենների գրությամբ, նաև ծաղիկների դաշտի համապատասխան ձևավորմամբ ձեռք բերեցին ցուցապաստառային գործառույթ:[3] Բավականին ներկայություն ունեին «մեջբերումային» մտածողությամբ ստեղծված ցուցապաստառները, որոնց մեջ առանձնանում էին հայ պոեզիայից արված մեջբերումները[4] («Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, / Թո՛ղ ողջ աշխարհ հային կարդայ նախատինք»,

---

[1] Մանրամասն տե՛ս *Հարություն Մարության*, Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը: Երևան, 2009, էջ 20-22:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 22-23: Հոդվածի ծավալի սահմանափակ լինելու պատճառով կդիտարկվեն միայն առաջին վեց խմբերը:

[3] Մանրամասն տե՛ս *Հարություն* Մարության, Ծաղկեպսակը որպէս ցուցապաստառ (ցեղասպանութիւնը եւ հայ ինքնութեան պատկերագրութիւնը). – «Հանդէս Ամսօրեայ», 2001, էջ 355-407:

[4] Մանրամասն տե՛ս *Հարություն* Մարության, Հայ պոէզիան որպէս ինքնութեան պատկերագրութիւն (ըստ Ղարաբաղեան շարժման ցեղասպանութեանը նուիրուած ցուցապաստառների). – «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ի (20), 2000, էջ 269-306:

«Նահատակները հրամայում են», «Վշտի պահին ամենամութ / Միայնակ ես, հայ ժողովուրդ», «Մի հող, որ թեկուզ / Երկինք համբառնա, / Հայոց եղել է / Հայոց կմնա», «Ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր, կոչեմ ապրողաց», «Ով մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ»), նաև հասարակական-քաղաքական հնչողություն ունեցող ստեղծագործություններից («Пепел жертв геноцида 1915, 1918, 1920, 1988 стучит в наши сердца»), այնպես էլ առանձին ելույթներից («Հայերի դատը մարդկության դատն է»), մամուլում տեղ գտած հոդվածներից, զանազան կոչերից («Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել»), կարգախոսներից («Հավերժ միասին, մեր գործն արդար է»), պատմությանը հայտնի ձևակերպումներից («Мы не забудем кровавое воскресенье Сумгаити!») արված մեջբերումները:

Ցուցապաստառների մի ծավալուն խումբ առանձնանում էր ցեղասպանության ճանաչման պահանջով՝ անհասցե («Ճանաչել 1915 թ. Մեծ Եղեռնը», «1915 թ.-ը պաշտոնապես ճանաչել որպես ցեղասպանություն» և այլն), ուղղված ԽՍՀՄ-ին («СССР признать геноцид 1915 года», «ԽՍՀՄ, բավակա՛ն է, ճանաչի՛ր հայերի ցեղասպանությունը», «Правительство СССР! Признайте геноцид армян» և այլն), ՄԱԿ-ին («We appeal to United Nations to accept the Armenian Genocide»), մարդկությանը («Геноцид армян – преступление перд человечеством», «Ի՞նչ է պատահել Երկիր, ձեռք մեկնիր փոքր ազգին», «Քար աշխարհ» և այլն), Աստծուն («- Տե՛ր Աստված, պատժում ես մեզ՝ չգործած մեղքերի համար»), առաջարկում էին իրատեսական և սիմվոլիկ ելքեր («Հայ կոտորածներն ով մտքից հանի / Նա է թշնամին նոր Հայաստանի», «Եղեռնի կազմակերպիչներին ոչ՛ մի ներում», «Ցեղասպանություն չընդունողը ցեղասպանության մասնակից է», «Ցեղասպանության հատուցումը մեր հողերի վերադարձն է» և այլն):

Ցուցապաստառների մի մեծ խումբ առաջարկում էր սումգայիթյան ջարդերի և Մեծ եղեռնի ժողովրդական համադրություններ («Սումգայիթը Մեծ եղեռնի շարունակությունն է», «Нежелание признать геноцид 1915 г. привело к геноциду 1988 г.», «1915 1988», «Տեր-Զոր – Սումգայիթ / ոճիրի համար վճիռ», «Дейр-Зор Бухенвальд Сумгаит», «Դեր-Զոր, Ալթայ, Սումգայիթ», «…1915…1937…1988», «Պանթուրքիզմ Դեր-էլ-Զոր / Ստալինիզմ Ալթայ / ???-իզմ Սումգայիթ», «Обезглавили турки целый народ. Хотели оставить одного армянина, и то... для музея... 1895-96 500000, 1915 1500000, 1918 (Баку) 30000, 1920 (Шуши) 35000, 1988 (Сумгаит) 26...? О справедливость людская, ты достойна плевка в лицо», «սումգայիթը շարունակությունն է 1915 թ. եղեռնի, 1920 թ. բաքվի և Շուշիի կոտորածների» և այլն): Մի մեծ խումբ էլ պահանջում էր սումգայիթյան ոճրագործությանը տալ քաղաքական գնահատական («Политическую оценку сумгаиту», «Բացահայտել սումգայիթի կազմակերպիչներին», «Политическая оценка сумгаитских зверств – залог добрососедства» և այլն):

Խորհրդային զորամիավորումների նկատմամբ տեղ գտած վերաբերմունքի փոփոխությունն ինքնության ձևափոխման ցուցիչ էր, մասնավորապես՝ ավելի քան 150 տարվա՝ ռուս զինվորի փրկարար դերի մասին պատկերացումների համակարգի արմատական փոփոխություն, ինչը տեղ գտավ հատկապես 1988 թ. հուլիսի 5-ի «Զվարթնոց» օդանավակայանի դեպքերից հետո («Убийцы – вон из Армении», «Это же наши дети. Бухенвальдзе, Освенцем, Хатынь – Обмен опыта – Сумгаит, Масис, Звартноц, Шуша, Степанакерт...», «Հայաստանն առանց պատժիչ զորքերի», «Оккупационные войска, вон из НКАО», «Позор советским войскам», «Реклама – Министерство обороны СССР предлагает: витамин БТР! Лучшее средство против свобододемократизма. Не разрешается применять без назначения ЦК КПСС. Противопоказания: при применении – *в Армении* ожидаемых результатов не дает. Побочные действия: народная революция, самоопределение, голодовки, забастовки и т.п.» և այլն):

Բազմաթիվ տրանսպարանտներում ու պլակատներում առաջ էր քաշվում սումգայիթյան հանցագործություններն անմիջականորեն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտում և պատժում. «Մահ Սումգայիթի դահիճներին», «Организаторов сумгаитского геноцида – к ответу!», «Политбюро! Кто организовал Сумгаит?», «*Политбюро*! Не скрывай организа-

торов сумгаитского геноцида»: Ու քանի որ վերոբերյալ պահանջը չէր կատարվում, մարդիկ իրե՛նք էին նշում իրական մեղավորներին. «Геноцид в Сумгаите – преступление азербайджанского пантюркизма», ««Մշտական բարեկամները» «մշտական թշնամիների» հովանավորությամբ իրականացնում են հայերի բնաջնջումը», «Сумгаитский геноцид – интернационализм Кремля», «Кто стоит за палачами сумгаита???», «За спиной сумгаитских палачей стоит Москва», «Москва→Баку→Сумгаит», «Кремль! Отвечай за Арцах и Геноцид армян» և այլն:

Սումգայիթյան ոճրագործությունների մասնակիցների նկատմամբ տարվող դատավարությունը գնահատվում էր իբրև «խեղկատավարություն». «Ամոթ Սումգայիթի դատախաղին», «Преднамеренный погром не путать с хулиганскими побуждениями», «Безнаказанность организованных погромов рождает новые погромы», «Պահանջում ենք արդարացի դատ Սումգայիթի ոճրագործների հանդեպ», «Сумгаитский процесс – пародия справедливости» և այլն:

Արդյունքում հայոց ինքնության մեջ տեղ գտավ անցյալի և ներկայի վերագնահատման գործընթաց, երբ սկսեցին առաջարկվել այլ լուծումներ. «Զարթի՛ր, լառ, մը՛ռնիմ քը՛զի», «-Ոչ լացել է պետք, ոչ հուսահատվել, / Հայի պայքարը կա ու կլինի…», «Մենք պետք է կռվենք, և ոչ լաց լինենք / Ազգի կորուստը զենքով ետ խլենք», «Սուգը հավերժ է, երբ պայքար չկա», «Ո՞վ հայ ժողովուրդ մեր միակ փրկությունը մեր հավաքական ուժի մեջ է»:[1]

«Հայ ժողովուրդ» պայմանականորեն առանձնացվող թեմայի մեջ ընդգրկված ցուցապաստառների տեքստերի վերլուծությունը թույլ է տալիս հետևել հարցի շուրջ տեղ գտած վերաբերմունքի և ընկալումների փոփոխություններին: Թեմայի մեջ առանձնանում են մի քանի «կարմիր թելեր». զորակցություն Ղարաբաղին («Մենք քեզ հետ ենք, Ղարաբաղ», «Не оставим вас в беде, карабахцы»), հայ ժողովրդի միասնության գիտակցությունն իբրև փրկության նախապայման և Արցախի հարցի լուծման գրավական («Հայ ժողովրդի ուժը նրա միասնության մեջ է», «Հույսներս մեզ վրա, հայեր» և «Մեր միակ պաշտպանը մենք ենք», «Հայեր բոլոր երկրների, միացեք», «Հայ ժողովրդի միասնությունը Արցախի հարցի լուծման գրավականն է»), խորհրդային ռազմուժի դիտարկումն իբրև վտանգ ժողովրդական շարժմանը, Հայաստանի «գերված» լինելու («Գերված ենք մենք, ոչ ստրուկ. Վ. Տերյան») և ազատության համար ազգովին պայքարելու անհրաժեշտության գիտակցումը («Պայքար մինչև վերջ», «Պայքար հանուն ապագայի, պայքար մինչև վերջ», «Հերիք է լռել, պետք է գործել», «Ոչ լացել է պետք, ոչ հուսահատվել, հայի պայքարը կա և կլինի»), հայության շահերի կապակցումը Եվրոպայի և աշխարհի հետ («Հայ ազգի թիկունքին աշխարհն է, վրացիների թիկունքին՝ հայերը», «Աշխարի օգնությունը մեզ՝ մեր 9-ամսյա պայքարի արդյունքնն է», «Միջազգային ճանաչում Հայկական հարցին»), Միացյալ Հայաստանի գաղափարի արծարծումը («Միացյալ Հայաստանը ըստ Սևրի պայմանագրի»): Այս նույն թեմայի մեջ կարելի է դիտարկել նաև հայոց լեզվի ու հայկական դպրոցի հարցերի արծարծումը,[2] երբ խնդիր է դրվում «Հայ երեխային – հայ դպրոց» և «Հայ ենք, խոսենք հայերեն», ռուսական դպրոցների հետագա գոյության խնդիրը դրվում էր հարցականի տակ («Մենք պահանջում ենք ավելացնել ռուսական դպրոցներում հայոց լեզվի ժամերը», «Ռուսական դպրոցը հայության գերեզմանն է»):

Կենտրոնի՝ ԽՍՀՄ ղեկավարության (այդ թվում Ռուսաստանի և ռուսների) և խորհրդային կարգերի նկատմամբ վերաբերմունքի մեջ երևում են հետևյալ ուղղությունները. «Կենտրոնը»/Մոսկվան դիտվում էր որպես ճշմարտության պարտակիչ («Москва!!! … где Правда»),

[1] Մանրամասն տե՛ս *Հարություն* Մարության, Ցեղասպանության հիշողությունը որպես նոր ինքնության ձևավորիչ (1980- ական թվականների վերջ - 1990-ական թվականների սկիզբ). – «Պատմա-բանասիրական հանդես», 2005, թիվ 1, էջ 55-66:

[2] Մանրամասն տե՛ս *Հարություն* Մարության, «Տեր-Զոր … Սումգաիթ … Ատոմակայան … Նաիրիտ». «Ցեղասպանություն» հասկացության սահմանների ընդլայնումը Ղարաբաղյան շարժման տարիներին (1988-1990 թթ.). – Նոր ազգագրական հանդես, 2005, թիվ Ա, էջ 78-88:

շատ երևույթների վրա աչք փակող, տեսնել չցանկացող («Մոսկվա, ինչու՞ ես փակել աչքերդ»), հայության նկատմամբ նրա գործելակերպը որակվում էր որպես ծաղր («Прекратить издевательство над целым народом») և պայմանավորվում էր ադրբեջանցիների կողմից գնված, կաշառված լինելու հանգամանքով, Կենտրոնից եկող քաղաքական որոշումները համարվում էին կործանարար («Հուլիսի 18-ի որոշումը մեր ժողովրդի կործանումն է»), նրա՝ Հայաստանից և Կովկասից հեռանալու խնդիրն էր բարձրացվում («Մոսկվայի ամենամեծ օգնությունը մեր երկրից հեռանալն է», «Մոսկվա, դուրս մեր տնից», «Մոսկվան Կովկասի դահիճն է»), Հայաստանում իրականացվող բռնությունները համեմատվում էին ստալինիզմի հետ («Репрессии в Армении шаг к сталинизму»), ծանակվում էր աղետի գոտու վերականգման գործընթացը, շեշտվում էր Հայաստանի շրջափակման մեջ Կենտրոնի դերակատարությունը, ուղղակիորեն նշվում էր լոկ ռազմական ուժի միջոցով խորհրդային հանրապետություններին մեկ միության մեջ միավորելու հանգամանքը («Сильный центр, сильные республики» «Направо вое гос. удар ство»), քննադատվում էր ազգային քաղաքականությունը («Ленинская национальная политика – свободное кровоизлияние народов»):

Վերակառուցման, հրապարակայնության ու դեմոկրատացման քաղաքականության նկատմամբ վերաբերմունքի մեջ (ներառող նաև բյուրոկրատիայի քննադատությունը) առանձնանում են հետևյալ մոտեցումները. խորհրդային կենտրոնական մամուլի օրգանները, կենտրոնական հեռուստատեսությունը որակվում են որպես ստախոս («Правда? Неправда!», «Нет места лжи в “Правде”!», «Хватит дезинформировать советский народ», «ТВ. Время назад»), անվանապես քննադատվում են հակահայկական ուղղվածության հրապարակումների հեղինակները («Розыскивается особо опасный преступник овчаренко враг перестройки и гласности»), անձնավորվում են վերակառուցման թշնամիները («Здравствуйте, враги перестройки», «Арзуманян или гласность»), նրանց վրա է բարդվում սումգայիթյան հանցագործությունների մեղավորությունը («Враги перестройки – организаторы Сумгаита»), խորհրդային ժողովրդավարությունը նույնացվում է պատիժի հետ («Демократия»), նշվում է, որ առկա են ճնշումներ մամուլի վրա և որ կենտրոնական մամուլի օրգանները կաշառված են ադրբեջանցիներ կողմից, մատնանշվում է, որ Շարժման պահանջները այս կամ այն կերպ ուղղված են նաև բյուրոկրատների ու պաշտոնամոլների դեմ («Արցախի ազատագրումը բյուրոկրատիայի մահվան սկիզբն է»):

«Ղարաբաղը Հայաստանի մաս» թեմայի[1] հիմնական կարգախոսը՝ «Ղարաբաղը մերն է», փաստորեն արտահայտում էր Ղարաբաղյան շարժման կվինտէսենցիան: Ի՞նչ կերպ էր այդ «մերը լինելը» դրսևորվում ցուցապաստառներում: Սկսած 1988 թ. փետրվարից, ողջ տարվա ընթացքում, մեծ քանակությամբ «համերաշխության տրանսպարանտներ» հանդես եկան, որոնցում, ամենատարբեր մակարդակներում, աջակցություն էր հայտնվում Արցախի ժողովրդին. («Մեսրոպ Մաշտոցը և Օշականը ձեզ հետ են», «Բաղրամյանի անվան սովխոզը միանում է ձեզ Ղարաբաղի հայեր», «Արարատը քեզ հետ է, Ղարաբաղ», «Կաբելագործները Արցախի հետ են», «Արցախ, Արտաշատը միշտ քեզ հետ է», «Ղարաբաղ չվախենաս, Հակոբիկը քեզ հետ ա»): Դիտարկվող թեմայում արտացոլում էր գտել ժողովրդի պատկերացումը իր պատմության, պատմական արդարության, ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ, ինչը սնում էր Շարժումը նրա գոյության ողջ ընթացքում: 1988 թ. նոյեմբերյան «Воссоединение Арцаха и Армении – исторически справедливое требование армянского народа» պլակատը, թերևս, առավել տարողունակ է փոխանցում այս գաղափարը Շարժման սկզբնական էտապի ամբողջ տրամաբանությամբ, երբ գլխավոր շեշտը դրվում էր պատմական արդարության վերականգնման վրա: «Մերը լինելու»

[1] Մանրամասն տե՛ս *Հարություն Մարության, Լևոն* Աբրահամյան, Հայ ինքնության պատկերագրությունը. քննության փորձ Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների մի խմբի նյութերով. – Հայացք Երևանից. Հայագիտական: Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների հայկական կենտրոն: Երեւան, 1997, թիվ 4, էջ 55-68:

հիմնավորմանը նպաստում էին ստեղծվող «լենինյան ասույթները՝ «Վերակառուցումը լիովին համապատասխանում է լենինյան ազգային քաղաքականությանը» և այլն: Վիրտուալ միավորումն իրականացվում էր «քարտեզային» լուծումներ ունեցող պլակատներով՝ կից համապատասխան տեքստերով:[1] Դիտարկվող խմբի պլակատների ևս մի հատված կարելի է առանձնացնել յուրահատուկ բանալի հանդիսացող «միացում» բառի առկայությամբ. «Միացումը մեր գլխավոր խնդիրն է», «Հայաստան-Արցախ-միացում», «Արցախ-միացում» և այլն: 1990 թ. ամռանն «միաց-ման» գաղափարը սկսում է սնել և առանձին կազմակերպությունների պահանջատիրական ծրագրերը. այդպիսիք են, օրինակ «Արցախյան պահանջատիրությունը ազգի միասնության հիմքն է», «Արցախի պահանջատիրությունը հայ դատի անբաժանելի մասն է», «Ով Արցախի հետ չէ և պահանջատեր չէ՝ հայ չէ» լոզունգները: «Միացում»-ի գաղափարը՝ արդեն վերամիավորման երանգով՝ իր դրսևորումը գտավ բազմաթիվ այն պլակատներում, ուր խաղարկվում էր միմյանցից բռնի անջատված և միմյանց կրկին գտնել երազող մոր և զավակի մոտիվը. «Մայրիկ, օգնիր, դժբախտության մեջ եմ», «Мать-Армения ждет свое дитя Арцах», «Мы ждем свое дитя Арцах», «Մայր-Հայաստանը քեզ է կանչում, Ղարաբաղ», «Որբ Ղարաբաղը մայր է ուզում», «Мечта карабахцев – воссоединение с матерью-Арменией» և այլն: Ղարաբաղի «մերը լինելու» ապացուցման միջոցների մեջ հանդիպում էին ինչպես համբերության կոչեր՝ («Հայեր, դիմացե՛ք, Ղարաբաղը մերն է») մինչև կտրական ձևակերպումներ՝ «Մի հող, որ թեկուզ երկինք համբառնա,/ Հայոց եղել է, Հայոց կմնա», «Ղարաբաղը մերն է եղել, կա և կլինի» կամ էլ «Ղարաբաղը *միայն* Հայաստանին» և այլն: Գործնականում իրականացավ այլ բնույթի տեքստերում, մասնավորապես 1990 թ. հուլիսյան պլակատներում հնչած կանխագուշակումը, այն է՝ «Արցախը հայոց ազատամարտի առանցքն է» և «Արցախը անկախութեան ուղին է»:

«Վերաբերմունքը ԽՄԿԿ-ի ու նրա քաղաքականության նկատմամբ» խմբի ցուցապաստառները շատ լավ ցույց են տալիս մարդկանց պատկերացումների փոփոխության դինամիկան՝ տեղ գտնող իրադարձություններին զուգահեռ: Եթե 1988 թ. փետրվարին արվում էր ԽՄԿԿ ու նրա ղեկավարության «գովքը», դրսևորվում էր հավատը գործողությունների արդարացիության նկատմամբ («Да здравствует КПСС и ее ленинская национальная политика», «Мы верим в справедливое решение Политбюро ЦК КПСС», «Горбачев-партия-перестройка»), իսկ մայիսմեկյան շքերթում դեռևս արտացոլվում էին սասանված հավատի տարրերը («Вся власть советам», «Перестройка исправит исторические ошибки», «Ленинизм – без оговорок», «Гласность и демократия – родители справедливости»), ապա հուլիսի 5-ի «Զվարթնոց օդանավակայանի և հուլիսի 18-ի ԽՍՀ Գերագույն խորհրդի քննարկումներից հետո ցուցապաստառների հռետորաբանությունը արմատապես փոխվեց. համոզմունք էր հայտնվում, որ «Կարմիր կովը կաշին չի փոխի» (այսինքն՝ ԽՄԿԿ-ն իր քաղաքականությունը չի փոխի), որ ԽՄԿԿ ղեկավարության մեջ իշխում է մեկ հոգու խոսքը («ПартиЯ ум честь и совесть нашей эпохи» (Լ. Բրեժնևի նկարով), «***Я*** тут посоветовались..., парти***я***, сесси***я***, демократи***я***, конституци***я***...» (ամենուրեք Я տառը իր մեջ է առել ողջ բառը), որ կուսակցության ղեկավարությունը գնված է մուսուլմանական կրոնի ներկայացուցիչների կողմից (մի պլակատում Մ. Գորբաչովը Ղուրան է կարդում, ճակատին՝ խալի փոխարեն՝ գրված է «Карабах?», իսկ ներքևի մասում նրա խոսքերն են. «Мы в ЦК внимательно ищем пути решения Карабахской проблемы»), Ադրբեջանի կոմունիստներին մեղադրում էին СПИД-ով (Стул Превыше Интересов Демократии) վարակված լինելու մեջ, ամոթանք էր տրվում կուսակցության հայազգի անդամներին («ՍՄԿԿ անդամ հայ գրողը, մտաւորականը դաւաճան է», «Ամօթ այն հայերին, ովքեր դուրս չեն գա ՍՄԿԿ-ից»), ԽՄԿԿ-

[1] Մանրամասն տե՛ս *Հարություն Մարության,* Քարտէզը որպէս ինքնութեան խորհրդանիշ. – «Հանդէս Ամսօրեայ», 2006, էջ 443-478: *Арутюн* Марутян, Карты как символы национального движения в Армении. – В сб.: Mythical Landscapes Then And Now: The Mystification of Landscapes in Search for National Identity (Editors – Ruth Buttner, Judith Peltz), Yerevan, 2006, с. 229-250, 279-285.

ն մեկնաբանվում էր ոչ թե հաղթանակներ կերտող, այլ աղետներ կազմակերպող և ոգեշնչող («КПСС – организатор и вдохновитель всех наших побед» [по-ի վրա խաչ է քաշված]), իսկ 1990 թ. փետրվարին, սումգայիթյան եղեռնագործության երկրորդ տարեդարձի օրը, վերաձևակերպելով Վ. Լենինի 1903 թ. բանաձևը, հստակ նշվում էր՝ «Սումգայիթը ԽՄԿԿ-ի խիղճն ու պատիվն է. 1915 – 1.500.000 – Թալեաթ, 1988 - ? – Ալիև, 1990 - ? – Մ. Գ. [Միխայիլ Գորբաչև] – Genocid»:

Վերոբերյալ տեքստերը ցուցիչներն են այն արմատական փոփոխությունների, որ տեղ գտան խորհրդահայ քաղաքացիների ինքնության մեջ Ղարաբաղյան շարժման ընթացքում, որոնք էլ բերեցին անկախության կերտման գաղափարի անհրաժեշտության գիտակցմանը և 1991 թ. սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակմանը:

Տեղեկություններ հեղինակի մասին.
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԻՐԱՆԻ ՄԱՐՈՒԹՅԱՆ - պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Արդիականության ազգաբանության բաժին, գլխավոր գիտաշխատող
E-mail: hmarutyan@yahoo.com, harutyunmarutyan@gmail.com

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը: